

լին (տե՛ս վարը): Սրբադասուած Ամբրոսիոս հեղինակ է շարք մը երկերու եւ շարականներու:

- **Հիերոնիմոս** (լատ.՝ Hieronymus, 347 – 420 թ.), որ եւս Կաթոլիկ եկեղեցւոյ սկզբնական շրջանի, սրբադասուած, չորս *Եկեղեցւոյ Հայրերէն* մէկն է: Հիերոնիմոս եղած է նշանաւոր աստուածաբան մը, հանրածանօթ իր խիստ ճգնաւորական կեանքով: Ան կատարած է Աստուածաշունչի Հին Կտակարանի առաջին լատիներէն թարգմանութիւնը եւ բարելաւած՝ Նոր Կտակարանի արդէն գոյութիւն ունեցող լատիներէն թարգմանութիւնը: Հեղինակ է նաեւ կրօնական ու աստուածաբանական այլ երկերու:
- **Օգոստինոս Երանելի** (լատ.՝ Aurelius Augustinus, 354 – 430 թ.), որ եւս եղած է Կաթոլիկ եկեղեցւոյ սկզբնական շրջանի սրբադասուած չորս եկեղեցւոյ Հայրերէն մէկը: Ուղղափառ եկեղեցւոյ կողմէ ան կը դասուի՝ երանելիներու կարգը, նաեւ հայերու մօտ ծանօթ է, որպէս *Օգոստինոս Երանելի*: Երիտասարդ Օգոստինոս, երկա՛ր տարիներ հետեւած է արեւելեան կրօնափիլիսոփայութիւն նկատուող *Մանիքեութեան* (Manicheism), ինչպէս նաեւ փիլիսոփայական յունական կարգ մը ուղղութիւններու, ինչպէս կասկածապաշտ Ստոյիկութեան (Stoicism) ու Նոր-Պլատոնականութեան (Neoplatonism): Աւելի ուշ, 33 տարեկանին, քրիստոնեայ մկրտուած է վերոյիշեալ Միլանի եպիսկոպոս Ամբրոսիոսի կողմէ: Օգոստինոս եղած է նշանաւոր փիլիսոփայ - աստուածաբան մը: Հեղինակ է աստուածաբանական եւ փիլիսոփայական որակաւոր երկերու, որոնք մինչեւ այսօր ուսումնասիրութեան նիւթեր կը մատակարարեն:

Մեծ է նաեւ Փիլոնի ազդեցութիւնը բովանդակութեան առումով, մանաւանդ Քրիստոնէութեան վրայ: Արդ, Քրիստոնէական կրօնագիտութեան համար, հետաքրքրութեան առարկայ դարձան, յատկապէս Փիլոնի կողմէ մշակուած, հետեւեալ 3 նիւթերը.-

1. Երրորդութիւնը.-

Փիլոն Ալեքսանդրացիի կողմէ, *Աստուծոյ* առնչուած 3 ուժերը՝ «*Աստուծոյ Բարին*», «*Աստուծոյ Հեղինակութիւնը*» եւ «*Բանն Աստուծոյ*», զորս Փիլոն *Երեքութիւն* կոչած է, հետագային պիտի տեսնենք նաեւ Քրիստոնէական կրօնի մէջ, ուր միակ Աստուծոյ 3 անձերը կը հանդիսանան՝ Հայրը, Որդին եւ Հոգին, որոնք Քրիստոնէութեան անբաժանելի *Երրորդութիւնը* կը կազմեն:

2. Բանը.-

Փիլոնի *Երեքութեան* մէջ գտնուող 3-րդ ուժը, «Բանն Աստուծոյ», որ առաջին երկու ուժերը ամրապնդող կապն է, հետագային պիտի տեսնենք նաեւ Քրիստոնէական կրօնի մէջ, ուր *Երրորդութեան* երկրորդ անձը, «Որդին», նոյնիսկ «Բանն Աստուծոն» է, ինչպէս արդէն յիշուած է Յովհաննու Աւետարանի սկիզբը (Joh. 1/1-3), տե՛ս նաեւ Էջ 58-ի Էջատակի ծանօթագրութիւնը: